# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## <<ԱՎԱՆ>> ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

---

**Հասցե՝ ՀՀ ք. Երևան Աճառյան 1-ին նրբ., շենք 21**

**Հեռ.՝** (+37410) 61-72-82

<<05>> **սեպտեմբերի 2014թ.**

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԱՆ <<Ավան>> Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

**Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում** ԱՀԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԱՆ <<Ավան>> Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ, ՀՀ ք. Երևան Աճառյան 1-ին նրբ., շենք 21 հասցեով, մինչև **2014թ. սեպտեմբերի** 18-ը, **ժամը 10:00-ն**: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱՆ <<Ավան>> Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ, ՀՀ ք. Երևան Աճառյան 1-ին նրբ., շենք 21 հասցեով, **2014թ սեպտեմբերի 18-ին, ժամը** 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ԱՆ <<Ավան>> Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ -ի կարիքների համար՝ **Սննդամթերքի ձեռքբերումը**:

ՀՀ ԱՆ <<Ավան>> Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ -ի կարիքների համար՝ **Սննդամթերքի մատակարարման** (որոնք կազմված են՝ 1 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) **N 10** հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (**Հավելված N 5** ), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն.

բ. Գնային առաջարկ (**Հավելված N 5.1** ): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել **ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2** ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ ԱՆ <<Ավան>> Հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **mpcavanclinic.gnumner@hotmail.com**:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին, ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով

Տնօրեն՝ Ա. Հակոբյան